

Միւս դասը դիւանագիտական խնդիրներէ ձանձրոյթ կզգայ. իրեն համար գիտնալու առաջին խնդիրն այն է, թէ օղիի վրայ աղած ձո՛ւկ ուտելու է, մի՞ս թէ պտուղ. ահաւասիկ իրեն համար բարենորոգման խնդիր...:

Դաս մ'ալ կայ, որ ամբողջ օրեր վարսավիրայի խանութներու առջեւ կպտըտի, որոշում տալու համար, թէ ի՛նչ ձեւ տալու է մազերուն, որ օրիորդին հաճելի երեւնայ եւ իւր առջեւէն չվոնտուի:

Թեթեւ դաս մ'ալ կայ, որու վրայ թեթեւութիւնը ծանրացած է. երբ *ծանրացած* է, կ'ըսեմ, թեթեւութեան քանակութիւնը կ'երեւակայէք անշուշտ. այս դասը կիրակի օրերը նաւամատոյցին վրայ կսպասէ, որ օրիորդ կամ տիկին *\*\*\**ին հետ բարձրաձայն երկու բառ ֆրանսերէն խօսի:

Դաս մ'ալ կայ, որ առեւտուրի մէջ կորուսածն իսաղի մէջ վաստակելու համար խորամանկութիւն կխորհի. հարուստներն ալ ունին այս ախտը, բայց անոնք բամբասանքէ զերծ են, վասնզի ինչոր ախտ է աղքատի համար՝ անմեղ զբօսանք կհամարուի հարուստի համար:

Պզտիկ բացառութեամբ թէ՛ այրերն եւ թէ կիները պճնասէր են: Չափէն աւելի կարեւորութիւն կու տան հագուստներու, հետեւապէս այն, որ շքեղ հագուած է՝ կատարեալ մարդ է. իսկ այն, որ պարզ հագուած է՝ մարդ կոչուելու արժանի չէ: Ուր որ ալ ըլլայ, երբ կտեսնես կին մը, որ հովահարով մը դէմքը կհովհարէ, նոյն - իսկ ձմեռուան ամենասաստիկ ցուրտ օրերուն մէջ. որ երեսները մէյ մը աջ մէյ մը ձախ կդարձունէ կէս ծիծաղով. որ մէջքը միշտ կկոտորտէ եւ երկու բոպէին անգամ մը գլուխը կը շտկէ. որ ձեռնոցները կը հանէ, նորէն կը դնէ, շրջագգեստը կշտկէ, չհանի, կը կանգնի, նորէն շտկելու ջանք կ'ընէ, երբեմն բերանը բանալով դիտմամբ կխնդայ, որ ակոսները ցոյց տայ – եթէ չխնդար՝ գիտցիր, որ բերանին մէջ ակոյ չկայ – հասկցիր, որ այդ կինը միջագիւղցի է. իսկ երբ անոր քովը աղէկ հագուած երիտասարդ մը գտնուի ու հետը խօսակցի, երբեմն ֆրանսերէն բառեր գործածելով, այդ կնկան *սիկարա* հրամցունէ եւ քթին մէջ մտնելու չափ մօտենայ անոր՝ հազար ոսկիի գրաւ դիր, որ ատոնց երկուքն ալ միջագիւղցի են. եթէ կորսնցնես հազար ոսկին՝ եկուր ինձմէ առ:

Արեւէն չայրելու համար՝ իզական սեռն, քիչ բացառութեամբ, երեսը բրինձի փոշի կը քսէ. բայց Միջագիւղի լուսինն արեւու չափ կիզիչ ըլլալուն պատճառաւ՝ զիշերներն ալ կը գործածէ այն փոշին, որուն ոմանք սկսած են հիմա *թոմաթէս* խառնել: